2021-2022 ուստարվա

Հաշվետվություն

2 կիսամյակ

III-ա դասարան

III ա դասարանում I կիսամյակի սկզբին սովորել են 31 աշակերտ՝ 11 աղջիկ և 20 տղա, տարվա վերջում աշակերտների թիվը չի փոփոխվել:

Դասարանում աշակերտների առաջադիմությունը 100% է, որակականը՝ 55% : Գերազանց առաջադիմություն ունեն 7 աշակերտ, որոնցից 4 տղա, 3 աղջիկ: Հարվածային են 10 աշակերտ, իսկ միջակ՝ 14 -ը:

Դասարանն ունի մեծ պոտենցյալ, ինչը ուսուցիչ – աշակերտ համատեղ ու քրտնաջան աշխատանքի արդյունք է: Ուսուցիչների և ծնողների համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավորություն ընձեռնվեց իրականացնել և՛ ուսումնական, և՛ դաստիարակչական այն բոլոր խնդիրները, որոնք նախատեսվել էին տարվա սկզբին: Կազմակերպվել են ծնողական ժողովներ: Յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվել են հանդիպումներ ծնողների հետ և քննարկվել են ներքին կարգապահական, ինչպես նաև դաստիարակությանն ու ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր:

Դասղեկի ժամին իրականացվել են դաստիարակչական բնույթի տարբեր թեմատիկայով զրույցներ, որոնք նպաստել են դասարանում ընկերասիրության, հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:

Տեղի են ունեցել նաև փոխադարձ դասալսումներ ուսուցիչների և փոխտնօրենների կողմից:
Կազմակերպվել է էքսկուրսիա՝ "Հովհաննես Թումանյանի" անվան տիկնիկային թատրոն և "Պլանետարիում":

18.04.2022թ. 14րդ դասարաններում կազմակերպվեց միջոցառում "Սուրբ Հարության" տոնին նվիրված

24.04.2022թ. "Հիշատակի օր" ծաղիկներ խոնարհեցինք եղեռնի զոհերի հիշատակին

30.04.2022թ. "համապետական շաբաթօրյակ"

01.06.2022թ. համադպրոցական միջոցառում "Երեխաների պաշտպանության օրվան նվիրված"

Կիսամյակի ավարտին կազմակերպվել է նախագծային աշխատանքով էքսկուրսիա՝ Գառնի, Գեղարդ և "Պարտեզ" պուրակ, բնության գիրկ:

Դասվար՝ Լ. Գանջալյան